EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԹԱՄՐԱԶՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 42588/10)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

19 մարտի 2020թ.

Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների։

Թամրազյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek]՝ *Նախագահ*,

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պերե Պաստոր Վիլանովա [Pere Pastor Vilanova]՝ *դատավորներ*,

եւ Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ*,

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Բաբկեն Թամրազյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2010 թվականի հուլիսի 21-ին Դատարան ներկայացված վերոնշյալ գանգատը,

կողմերի դիտարկումները,

նշելով, որ 2014 թվականի մայիսի 19-ին Կառավարությունը ծանուցվել է դիմումատուի արդար դատաքննության իրավունքի եւ նրա՝ իր ունեցվածքից անարգել օգտվելու իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ բողոքների մասին, իսկ գանգատը մնացած մասով հայտարարվել է անընդունելի՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 3-րդ կետի,

2020 թվականի փետրվարի 25-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Դիմումատուն իր գանգատում ներկայացրել է բողոք այն մասին, որ շուրջ քսաներեք տարի իր տիրապետության տակ գտնվող հողամասն օտարվել է երրորդ անձի, որի նկատմամբ ինքը, ներպետական իրավունքի համաձայն, ուներ ձեռք բերելու նախապատվության իրավունք՝ ձեռքբերման վաղեմության ուժով: Դիմումատուն նաեւ բողոքել է, որ Վճռաբեկ դատարանը չի կատարել վիճարկվող վարույթում իր որոշումը պատճառաբանելու իր պարտականությունը: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը եւ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը:

ՓԱՍՏԵՐԸ

2. Դիմումատուն ծնվել է 1931 թվականին եւ բնակվում է Թեղուտ գյուղում: Դիմումատուին ներկայացրել են Երեւանում գործող իրավաբաններ պրն Ա. Ղազարյանը եւ տկն Ա. Եսայանը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը, իսկ այնուհետեւ՝ պրն Ե. Կիրակոսյանը:

4. Գրեթե քսաներեք տարի՝ 1986 թվականից մինչեւ 2009 թվականը, դիմումատուն տիրապետել է Տավուշի մարզի Թեղուտ գյուղին հարակից տարածքում գտնվող մոտավորապես 1 300 քառ. մետր մակերեսով հողամասը: Նա տեղադրել է ցանկապատ եւ պարտեզի սարայիկ, տնկել պտղատու ծառեր ու արել ջրամատակարարման համար անհրաժեշտ կարգավորումներ: Ըստ դիմումատուի՝ տվյալ հողատարածքն ուներ 1 294 քառ. մետր մակերես: Սակայն պաշտոնական փաստաթղթերի մեծ մասում դրա չափսը նշվում է 1 300 քառ. մետր:

5. Թեղուտ գյուղը նախկինում գտնվում էր Հաղարծին գյուղի վարչական սահմաններում (նախկինում հայտնի է եղել որպես Կույբիշեւ): 1986 թվականից

մինչեւ 1990 թվականը հողամասը գրանցված է եղել դիմումատուի անունով՝ համաձայն Կույբիշեւի սովխոզի տնտեսությունների գրանցման մատյանի։

6. 1994 թվականին Թեղուտ գյուղն առանձնացվել է Հաղարծինից՝ դառնալով առանձին վարչական միավոր։ Սակայն դիմումատուի տիրապետության տակ գտնվող հողամասը չի ընդգրկվել ո՛չ Հաղարծինի, ո՛չ էլ Թեղուտի վարչական սահմաններում։

7. 1995 թվականից մինչեւ 2007 թվականը (բացառությամբ 1998 եւ 1999 թվականների) դիմումատուն հողի օգտագործման համար վարձավճար է վճարել Թեղուտի համայնքապետարանին, որը վճարված գումարները պարբերաբար փոխանցել է պետական բյուջե։

8. 2008 թվականի ապրիլին դիմումատուն, որը շարունակում էր տիրապետել տվյալ հողամասը եւ մշակել այն, տեղեկացվել է այն մասին, որ դրանից մեկ տարի առաջ՝ 2007 թվականի ապրիլին, Տավուշի մարզպետարանն այն հրապարակային աճուրդով վաճառել է երրորդ անձի՝ Ա.Հ.-ին։

9. 2009 թվականի փետրվարի 3-ի գրությամբ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դիլիջանի տարածքային ստորաբաժանումը դիմումատուին տեղեկացրել է այն մասին, որ 2007 թվականի ապրիլի 23-ին Ա.Հ.-ն գրանցել է տվյալ հողի նկատմամբ իր իրավունքը։ Գրության մեջ այնուհետեւ, *inter alia* (*ի թիվս այլնի*), վկայակոչվել են թերթում տպագրված հայտարարությունը եւ Տավուշի մարզպետի (այսուհետ՝ Մարզպետ) 2007 թվականի մարտի 27-ի որոշումը՝ Ա.Հ.-ին հրապարակային աճուրդով հող օտարելու մասին։

10. Դիմումատուն հետագայում պարզել է, որ վերոնշյալ գրության մեջ նշված հայտարարությունը տպագրված է եղել «Հայաստանի Հանրապետություն» թերթի 2007 թվականի փետրվարի 21-ի համարում։ Գրության մեջ մասնավորապես նշվում էր, որ նույն թվականի մարտի 20-ին Տավուշի մարզպետարանը կազմակերպել է հրապարակային աճուրդ՝ շրջանի վարչական սահմաններում գտնվող հողամասի վաճառքի համար։ Նշվում էր, որ հողամասն ունի 1 394 քառ. մետր մակերես։

11. Ըստ դիմումատուի՝ իրեն հաջողվել էր ձեռք բերել Մարզպետի 2007 թվականի մարտի 27-ի որոշման պատճենը միայն 2009 թվականին։ Այս որոշման մեջ նշվում էր, որ Ա.Հ.-ն հաղթել էր 2007 թվականի մարտի 20-ի աճուրդում, եւ հողամասը պետք է վաճառվեր նրան։ Համապատասխանաբար, 2007 թվականի ապրիլի 3-ին Տավուշի մարզպետարանն Ա.Հ.-ի հետ կնքել է հողի վաճառքի պայմանագիր։

12. 2009 թվականի ապրիլի 21-ին դիմումատուն հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ պահանջելով, որ անվավեր ճանաչվեն Մարզպետի կողմից հողի վաճառքի պայմանագիրն ու դրան հաջորդող՝ Ա.Հ-ի իրավունքի գրանցումը, ինչպես նաեւ պարտավորեցնել Մարզպետին, որ իր հետ կնքի հողի ուղղակի վաճառքի պայմանագիր։

Իր հայցում դիմումատուն, *inter alia*, նշել է, որ 1986 թվականից ի վեր իր տիրապետության տակ է եղել Թեղուտ գյուղի հարեւանությամբ գտնվող՝ 1 300 քառ.մետր մակերեսով հողամասը, որտեղ ինքը տարիների ընթացքում զգալի բարելավումներ է արել։ Հաշվի առնելով այն փաստը, որ, չնայած առանց օրինական գրանցման, ինքն ավելի քան տասը տարի անընդմեջ, բացահայտ եւ բարեխղճորեն օգտագործել է պետական սեփականություն հանդիսացող հողը, այդպիսով ինքն ունի այդ գույքը ձեռք բերելու նախապատվության իրավունք։ Այս կապակցությամբ դիմումատուն վկայակոչել է Հողային օրենսգրքի 65-րդ, 66-րդ, 67-րդ եւ 72-րդ հոդվածները, ինչպես նաեւ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը, մասնավորապես՝ դրա 2007 թվականի մարտի 30-ի թիվ 3-357 որոշումը, որում նշված են ձեռքբերման վաղեմության ուժով պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող գույք ձեռք բերելու չափորոշիչները։

13. 2009 թվականի հուլիսի 8-ին Վարչական դատարանն ամբողջությամբ բավարարել է դիմումատուի հայցերը։ Անդրադառնալով Թեղուտի գյուղապետի կողմից տրված համապատասխան տեղեկանքին, համայնքի բյուջե փոխանցված վարձակալության վճարների վերաբերյալ ապացույցներին եւ վկաների

ցուցմունքներին՝ Վարչական դատարանը հիմնավորված է համարել, որ առնվազն 1995 թվականից մինչեւ Մարզպետի՝ հրապարակային աճուրդով հողամասը վաճառելու մասին որոշումն ընկած ժամանակահատվածում դիմումատուն ավելի քան տասը տարի անընդմեջ, բացահայտ եւ բարեխղճորեն տիրապետել է այդ հողամասը: Վկայակոչելով Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասը՝ դատարանը եզրակացրել է, որ դիմումատուն ունեցել է վիճարկվող գույքը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Դատարանն այնուհետեւ եզրակացրել է, որ ի հակադրություն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներին՝ Մարզպետը թույլատրել է հրապարակային աճուրդով վաճառել հողամասը, մինչդեռ այդ հողամասը ենթակա է եղել ուղղակի վաճառքի այն անձին, որն ունեցել է այն ձեռք բերելու նախապատվության իրավունք: Վերջապես, դատարանը վկայակոչել է Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մարտի 30-ի թիվ 3-537 (ՎԴ) որոշումը՝ նշելով, որ գույքի ձեռքբերման նախապատվության իրավունքի առկայությունը ճանաչելու համար այն փաստը, որ անձը տասը տարի անընդմեջ, բացահայտ եւ բարեխղճորեն տիրապետել է գույքը, գերակայում է այդ գույքի նկատմամբ մեկ այլ անձի սեփականության իրավունքի առկայությունը հաստատող ապացույցների նկատմամբ:

14. Ա.Հ.-ն վճռաբեկ բողոք է ներկայացրել: Նա պնդել է, մասնավորապես, որ վարույթի ընթացքում չի հիմնավորվել, որ դիմումատուն ունեցել է հողակտորն օգտագործելու իրավունք, եւ Մարզպետն իրավասու է եղել այն օտարելու երրորդ անձի, այս կոնկրետ դեպքում՝ իրեն, եթե ինքը ցանկանար:

Իր պատասխանում դիմումատուն պնդել է, *inter alia*, որ տվյալ հողամասը ենթակա է եղել ուղղակի վաճառքի իրեն՝ որպես այն ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձի, եւ հետեւապես Մարզպետի՝ այն աճուրդով օտարելու մասին որոշումն անօրինական է եղել: Դիմումատուն նաեւ նշել է, որ ինքը բավարարում էր Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասով եւ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով սահմանված բոլոր պահանջները, մասնավորապես՝ 2007 թվականի մարտի 30-ի թիվ 3-357 որոշման մեջ նշված պահանջները՝ պնդելու համար, որ ինքն ուներ ձեռքբերման վաղեմության իրավունքի ուժով տվյալ հողամասը ձեռք բերելու

նախապատվության իրավունք։

15. 2010 թվականի ապրիլի 2-ին Վճռաբեկ դատարանը բեկանել է Վարչական դատարանի վճիռը եւ մերժել դիմումատուի հայցերը։ Որոշման մեջ, որը ենթակա չէր բողոքարկման, մասնավորապես նշվում էր հետեւյալը.

> «... այն հանգամանքը, որ [դիմումատուն] Թեղուտ համայնքին վճարել է վարձավճարներ, չի կարող էական նշանակություն ունենալ սույն վեճի լուծման համար, քանի որ վիճելի հողամասը Թեղուտ համայնքի վարչական սահմաններում չի գտնվում, հետեւաբար Թեղուտ համայնքին վարձավճարները վճարված լինելու փաստը չի կարող հողամասն ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ եւ բացահայտ տնօրինելու փաստը հավաստող հանգամանք հանդիսանալ։
>
> ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այլ սեփականատիրոջը պատկանող հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ծագումը կարգավորվում է Քաղաքացիական օրենսգրքով։
>
> ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի [1-ին մասի] համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ եւ անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն)։
>
> Նշված նորմի վերլուծությունից հետեւում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը պետությանը կամ համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի նկատմամբ կիրառելի չէ (տես՝ Գրիգոր Խաչատրյանն ընդդեմ Թամո Թամոյանի, ... Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մարտի 27-ի թիվ 3-153(ՎԴ) որոշումը)»։

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

I. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ա. Հողային օրենսգիրք (ուժի մեջ է 2001 թվականի հունիսի 15-ից)

16. 51-րդ հոդվածով սահմանվում է, որ քաղաքացիները եւ իրավաբանական անձինք կարող են ձեռք բերել հողամասերի նկատմամբ իրավունքներ, եւ նրանց՝ հողամասերի նկատմամբ օգտագործման իրավունքները կարող են սահմանափակվել, *inter alia*, ձեռքբերման վաղեմության ուժով:

17. 55-րդ հոդվածում նշվում է, որ քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողերը պետության սեփականությունն են:

18. Համաձայն 63-րդ հոդվածի՝ պետության սեփականության հողամասերն օտարվում են սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու, հողամասերն ուղղակի վաճառելու եւ աճուրդի միջոցով:

19. 64-րդ հոդվածով սահմանվում են պետության եւ համայնքների սեփականության հողամասերի՝ սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու միջոցով օտարման դեպքերը, իսկ 65-րդ հոդվածով սահմանվում է համապատասխան կարգը:

20. 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշվում է, որ պետության եւ համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է օրենքներով գնման նախապատվության իրավունք ունեցող անձանց:

66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասերի ուղղակի վաճառքի գինը սահմանվում է տվյալ հողամասի կադաստրային գնի չափով:

21. 67-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ պետության եւ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքը, բացառությամբ 65-րդ եւ 66-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի, կատարվում է աճուրդով:

22. 72-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, որոնք ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու

բացահայտ, սակայն առանց իրենց իրավունքների իրավաբանական ձեւակերպման օգտվում են պետության կամ համայնքի հողերից, ունեն այդ հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունք, եթե արգելված չէ սեփականության իրավունքով տվյալ հողամասերը ձեռք բերելը։

72-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այլ սեփականատիրոջ, այսինքն՝ ոչ պետությանը պատկանող հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ծագումը կարգավորվում է Քաղաքացիական օրենսգրքով։

Բ. Քաղաքացիական օրենգիրք (ուժի մեջ է 1999 թվականի հունվարի 1-ից)

23. Համաձայն 187-րդ հոդվածի 1-ին մասի՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ եւ անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն)։

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Ա. Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 2007 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 3-1835 (Ա) որոշում

24. Վկայակոչելով Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ ձեռքբերման վաղեմության իրավունքի ծագման վերաբերյալ հարցերը կարգավորվում են Հողային օրենսգրքով, իսկ այլ անձանց պատկանող հողամասերի նկատմամբ ձեռքբերման վաղեմության իրավունքի վերաբերյալ հարցերը կարգավորվում են Քաղաքացիական օրենսգրքով։

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգման, որ ստորին ատյանի դատարանը սխալ է թույլ տվել՝ կիրառելով Քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը, քանի որ վեճի առարկա հողամասը պետության սեփականությունն էր, եւ հետեւաբար պետք է կիրառվեին Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի դրույթները։

Բ. Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 2007 թվականի մարտի 30-ի թիվ 3-537 (ՎԴ) որոշում

25. Վճռաբեկ դատարանը նշել է, որ գույքի ձեռքբերման նախապատվության իրավունքի առկայությունը ճանաչելու համար այն փաստը, որ անձը տասը տարի անընդմեջ, բացահայտ եւ բարեխղճորեն տիրապետել է գույքը, գերակայում է այդ գույքի նկատմամբ մեկ այլ անձի սեփականության իրավունքի առկայությունը հաստատող ապացույցների նկատմամբ։

Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասը՝ նշելով, որ ձեռքբերման վաղեմության ուժով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունքը ծագում է հետեւյալ անհրաժեշտ պայմաններում.

1) անձն ավելի քան տասը տարի անընդմեջ, բացահայտ եւ բարեխղճորեն տիրապետել է պետության սեփականություն հանդիսացող հողը,

2) տվյալ հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերումն արգելված չէ,

3) դրանք վաճառվում կամ անհատույց փոխանցվում են միեւնույն նպատակով օգտագործման համար, կամ եթե հողամասերը համապատասխանում են Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին։

Գ. Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 2007 թվականի մարտի 27-ի թիվ 3-153 (ՎԴ) որոշում

26. Գործը վերաբերում է երկու մասնավոր կողմերի միջեւ ծագած գույքային վեճին։ Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ նույնիսկ նոտարական կարգով վավերացված առուվաճառքի պայմանագրի բացակայության դեպքում այն գնորդը, որն ավելի քան տասը տարի անընդմեջ, բացահայտ եւ բարեխղճորեն տիրապետել է հողը, տվյալ գույքի նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք։ Վճռաբեկ դատարանը նաեւ հիշեցրել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է նշել իր վճռի թե՛ փաստական եւ թե՛ իրավական հիմքերը։ Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի եւ իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության եւ կիրառման մեջ։ Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն դրույթը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ նաեւ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը։

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

27. Դիմումատուն բողոքել է, որ Վճռաբեկ դատարանը, չնշելով իր գործի նկատմամբ կիրառելի օրենքը, չանդրադառնալով իր կողմից ներկայացված կարեւոր փաստարկներին եւ չնշելով սեփական նախադեպային իրավունքից շեղվելու պատճառները, թույլ է տվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, որն այնքանով, որքանով վերաբերելի է, ունի հետեւյալ բովանդակությունը

> «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... տրիբունալի կողմից ... արդարացի ... լսումների իրավունք ...»:

Ա. Ընդունելիությունը

28. Դատարանը նշում է, որ սույն բողոքը ո՛չ ակնհայտ անհիմն է, ո՛չ էլ անընդունելի Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

29. Դիմումատուն բողոքել է, որ Վճռաբեկ դատարանն իր 2010 թվականի ապրիլի 2-ի որոշման մեջ չի ներկայացրել Հողային օրենսգրքի համապատասխան դրույթները չկիրառելու վերաբերյալ որեւէ պատճառաբանություն այն հանգամանքներում, երբ հաստատվել է, որ տվյալ հողամասը պետության սեփականությունն էր: Ընդհանուր առմամբ Վճռաբեկ դատարանը չի նշել, թե որ իրավական դրույթն էր կիրառելի իր գործի նկատմամբ: Մասնավորապես,

մերժելով ձեռքբերման վաղեմության իրավունքի ուժով գույք ձեռք բերելու նախապատվության իրավունքը կարգավորող երկու հիմնական իրավական դրույթների, այն է՝ Քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի եւ Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառելիությունը՝ Վճռաբեկ դատարանը չի վկայակոչել որեւէ այլ իրավական դրույթ ո՛չ Քաղաքացիական օրենսգրքից, ո՛չ էլ Հողային օրենսգրքից, որը հիմք է տվել գալու այն եզրահանգման, որ դիմումատուն չի կարող օգտվել ձեռքբերման վաղեմության ուժով տվյալ հողամասը ձեռք բերելու նախապատվության իրավունքից։

Ավելին, Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել իր կողմից բարձրացված կարեւոր փաստարկներին, որոնք էական նշանակություն ունեին գործի քննության համար։ Մասնավորապես, ինքը խնդրել էր Վճռաբեկ դատարանին ուսումնասիրել այն փաստերն ու հանգամանքները, որոնք հաստատում էին, որ ինքը բացահայտ, անընդմեջ եւ բարեխղճորեն տիրապետել ու օգտագործել է տվյալ հողակտորը հենց դատարանի 2007 թվականի մարտի 30-ի թիվ 3-537 (ՎԴ) որոշման մեջ ամրագրված սկզբունքներին համապատասխան։ Ինքը նաեւ խնդրել էր Վճռաբեկ դատարանին գործը քննել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի տեսանկյունից։ Սակայն Վճռաբեկ դատարանն անտեսել էր այդ փաստարկները։ Ի տարբերություն Վարչական դատարանի՝ Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել գործում բարձրացված այն կարեւոր հարցին, թե առկա են արդյոք ապացույցներ, որոնք հիմնավորում են այն փաստը, որ ինքն ավելի քան տասը տարի բացահայտ, անընդմեջ եւ բարեխղճորեն տիրապետել է տվյալ հողակտորը՝ ի հակադրություն հենց դատարանի վերը նշված նախադեպային իրավունքին։ Փոխարենը Վճռաբեկ դատարանն առանց որեւէ պատճառաբանության կենտրոնացել է միայն այն ապացույցների վրա, որոնք ցույց են տալիս, որ հողը պատկանում էր պետությանը, եւ այն գտնվում է Թեղուտ համայնքի վարչական սահմաններից դուրս։ Միեւնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը վիճարկվող որոշման մեջ չի նշել իր այն նախադեպային իրավունքը չկիրառելու պատճառները, որը վերաբերում է պետության կամ համայնքների սեփականություն հանդիսացող գույքը ձեռքբերման վաղեմության ուժով ձեռք բերելու նախապատվության իրավունքին (թիվ 3-1835 (Ա)

եւ թիվ 3-537 (ՎԴ) որոշումներ)։ Նույն կերպ, Վճռաբեկ դատարանը չի բացատրել, թե ինչու է թիվ 3-153 (ՎԴ) որոշումն ընտրել որպես կիրառելի նախադեպ։

30. Կառավարությունը հայտնել է, որ Վճռաբեկ դատարանի կողմից իր 2010 թվականի ապրիլի 2-ի որոշման մեջ ներկայացված պատճառները բավարար են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները բավարարելու համար։ Ընդհանուր առմամբ, Քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի եւ Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի անկիրառելիության վերաբերյալ եզրահանգման գալով՝ Վճռաբեկ դատարանը հիմնավորել է մի քանի այլ իրավական նորմերի, այդ թվում՝ Հողային օրենսգրքով սահմանված նորմերի կիրառումը։ Կառավարությունը պնդել է, որ Վճռաբեկ դատարանը, մերժելով Քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի կիրառելիությունը, փաստորեն հաստատել է Հողային օրենսգրքի որոշ դրույթների կիրառելիությունը, սակայն ոչ Վարչական դատարանի կողմից իր 2009 թվականի հուլիսի 8-ի վճռում վկայակոչված եւ Ա.Հ.-ի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքին դիմումատուի կողմից տրված պատասխանում նշված դրույթների կիրառելիությունը։

Անգամ եթե Վճռաբեկ դատարանն իր 2010 թվականի ապրիլի 2-ի որոշման մեջ միայն նշել է Ա.Հ.-ի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը բավարարելու եւ ստորին ատյանի դատարանի որոշումը բեկանելու պատճառները, դա եւս բավարար կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների համար։ Վճռաբեկ դատարանը, Ա.Հ.-ի կողմից իր վճռաբեկ բողոքում բարձրացված փաստարկներին եւ ստորին ատյանի դատարանի որոշմանն իրավական գնահատական տալով, ուղղակիորեն անդրադարձել է դիմումատուի՝ վճռաբեկ բողոքի պատասխանում նրա կողմից ներկայացված կարեւոր փաստարկներին։

Վերջապես, Կառավարությունը նշել է, որ Վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգման, որ իր 2007 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 3-1835 (Ա) եւ 2007 թվականի մարտի 30-ի թիվ 3-537 (ՎԴ) որոշումները դիմումատուի գործի

համար կիրառելի չէին՝ տարբեր փաստական հանգամանքների պատճառով։ Միեւնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը վկայակոչել է իր 2007 թվականի մարտի 27-ի թիվ 3-153 (ՎԴ) որոշումը՝ այն կիրառելի համարելով դիմումատուի գործի հանգամանքների համար։

2. Դատարանի գնահատականը

31. Դատարանը հիշեցնում է, որ արդարադատության պատշաճ իրականացման հետ կապված սկզբունքն արտացոլող իր հաստատված նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանների եւ տրիբունալների վճիռներում պետք է պատշաճորեն նշվեն դրանց հիմքում ընկած պատճառները։ 6-րդ հոդվածի 1-ին կետը պարտավորեցնում է դատարաններին նշել իրենց վճիռների պատճառները, սակայն այն չի կարող հասկացվել որպես յուրաքանչյուր փաստարկին մանրամասն պատասխան տալու պահանջ։ Այն ծավալը, որով կիրառվում է պատճառները նշելու պարտականությունը, կարող է տարբեր լինել՝ կախված որոշման բնույթից։ Ավելին, անհրաժեշտ է հաշվի առնել, *inter alia*, այն փաստարկների բազմազանությունը, որոնք դատավարության կողմը կարող է ներկայացնել դատարաններ, եւ Պայմանավորվող պետությունների տարբեր մոտեցումները՝ օրենսդրական դրույթների, սովորութային կանոնների, իրավական եզրակացության, ինչպես նաեւ վճիռների ներկայացման եւ շարադրման վերաբերյալ։ Հետեւաբար այն հարցը, թե արդյոք դատարանը թերացել է կատարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածից բխող՝ պատճառաբանելու իր պարտավորությունը, կարող է որոշվել միայն գործի հանգամանքների լույսի ներքո (տե՛ս *Ռուիզ Տորիխան ընդդեմ Իսպանիայի* [*Ruiz Torija v. Spain*], 1994 թվականի դեկտեմբերի 9, § 29, շարք Ա թիվ 303-Ա, *Աջդարիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Ajdarić v. Croatia*], թիվ 20883/09, § 34, 2011 թվականի դեկտեմբերի 13, եւ *Կարմել Սալիբան ընդդեմ Մալթայի* [*Carmel Saliba v. Malta*], թիվ 24221/13, § 66, 2016 թվականի նոյեմբերի 29)։

32. 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակն է, *inter alia*, պարտավորեցնել «տրիբունալին» իրականացնել կողմերի ներկայացրած պնդումների,

փաստարկների եւ ապացույցների պատշաճ ուսումնասիրություն՝ չսահմանափակելով դրա՝ այն հարցի գնահատումը, թե արդյոք դրանք վերաբերելի են իր որոշման համար (տե՛ս Վան դե Հուրքն ընդդեմ Նիդեռլանդների [Van de Hurk v. the Netherlands], 1994 թվականի ապրիլի 19, § 59, շարք Ա թիվ 288):

33. Պետք է պարզել, թե արդյոք վերը նշված պայմանները բավարարվել են սույն գործում այնքանով, որքանով դա վերաբերում է Վճռաբեկ դատարանի 2010 թվականի ապրիլի 2-ի որոշմանը:

34. Այս համատեքստում Դատարանը գիտակցում է այն փաստը, որ այն նախկինում ընդունել է, որ վերաքննիչ բողոքը մերժելիս վերաքննիչ դատարանը կարող է, ըստ էության, ուղղակիորեն հաստատել ավելի ցածր ատյանի դատարանի որոշման պատճառաբանությունները (տե՛ս *Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի* [ՄՊ] [*García Ruiz v. Spain* [GC]], թիվ 30544/96, § 26, ՄԻԵԴ 1999-I): Սակայն Դատարանը նկատում է, որ այդ ժամանակ Հայաստանում վարչական արդարադատությունն իրականացվել է իրավազորության երկու մակարդակներում: Մասնավորապես, վարչական դատարանների որոշումներն ու վճիռները կարող էին բողոքարկվել միայն Վճռաբեկ դատարան: Այսինքն՝ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը ոչ միայն բեկանել է Վարչական դատարանի վճիռը, այլ նաեւ կայացրել է ըստ էության նոր որոշում, որը, ինչպես արդեն նշվել է, ենթակա չէր հետագա բողոքարկման, ուստի դրանով իսկ ամբողջությամբ փոփոխել է ստորին ատյանի դատարանի եզրահանգումները: Այս հանգամանքներում Դատարանը համարում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից իր որոշման հիմքում ընկած պատճառները պատշաճորեն նշելու իր պարտավորությունը պահպանելը պետք է ուսումնասիրվի առաջին ատյանի դատարանի կողմից գործի քննության համար կիրառվող սկզբունքների լույսի ներքո:

35. Ինչպես հետեւում է ներպետական իրավունքի համապատասխան դրույթներից եւ Վճռաբեկ դատարանի պրակտիկայից, ձեռքբերման վաղեմության ուժով գույք ձեռք բերելու նախապատվության իրավունքը կարգավորվում է տարբեր իրավական ռեժիմներով՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք տվյալ

գույքը պետության եւ համայնքների, թե մասնավոր անձի սեփականությունն է: Հետեւաբար, համաձայն իրավունքի վիճակի եւ դատական պրակտիկայի՝ պետության եւ համայնքների սեփականություն հանդիսացող հողերի ձեռքբերման վաղեմության իրավունքին առնչվող հարցերը կարգավորվում են Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածով, որով այն անձանց, որոնք ավելի քան տասը տարի անընդմեջ, բացահայտ ու բարեխղճորեն, սակայն առանց իրենց իրավունքների իրավաբանական ձեւակերպման օգտվում են պետության եւ համայնքների սեփականություն հանդիսացող հողերից, շնորհվում է այդ հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունք: Հատկանշական է, որ ո՛չ Հողային օրենսգրքով, ո՛չ էլ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով պետական սեփականություն հանդիսացող հողերը չեն տարբերակվում համայնքային սեփականություն հանդիսացող հողերից այնքանով, որքանով դա վերաբերում է համապատասխան իրավական ռեժիմի ընտրությանը: Միեւնույն ժամանակ, Քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով սահմանվում են այլ անձանց, այսինքն՝ ոչ պետության եւ համայնքների սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ձեռք բերելու պայմանները (տե՛ս վերեւում՝ 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ եւ 24-րդ պարբերությունները):

36. Դատարանը նշում է, որ Վարչական դատարանը, ուսումնասիրելով դիմումատուի կողմից ներկայացված համապատասխան փաստարկները, փաստաթղթերը եւ վկաների ցուցմունքները, իր 2009 թվականի հուլիսի 8-ի վճռում եկել է այն եզրահանգման, որ դիմումատուն բավարարել է Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի պահանջները, որը, ելնելով գործի հանգամանքներից, համարվել է ներպետական իրավունքի կիրառելի դրույթ (տե՛ս վերեւում՝ 13-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, պարզ չէ, թե որ իրավական դրույթն է համարվել որպես դիմումատուի գործի համար կիրառելի դրույթ՝ համաձայն Վճռաբեկ դատարանի 2010 թվականի ապրիլի 2-ի որոշման: Մասնավորապես, եզրակացնելով, որ Քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը կիրառելի չէ

տվյալ գործի համար, քանի որ այն չի վերաբերում պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող հողերին, Վճռաբեկ դատարանը չի նշել, թե ի վերջո որ իրավական դրույթն է կիրառելի դիմումատուի գործի համար (տե՛ս վերեւում՝ 15-րդ պարբերությունը): Այսպիսով, մի կողմից Վճռաբեկ դատարանը գտել է, որ Քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը կիրառելի չէ, մյուս կողմից էլ չի նշել, որ դրա փոխարեն պետք է կիրառվեր Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածը: Հաշվի առնելով այն փաստը, որ տվյալ հողը չի հանդիսացել պետական սեփականություն՝ Վճռաբեկ դատարանի ենթադրյալ որոշումն առ այն, որ Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածը կիրառելի չէ դիմումատուի գործի համար, հակասում է 2007 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 3-1835 (Ա) որոշման մեջ իր իսկ կողմից ներկայացված եզրահանգումներին (տե՛ս վերեւում՝ 24-րդ պարբերությունը), մինչդեռ չի տրվել որեւէ պատճառաբանություն՝ բացատրելու իր նախադեպային իրավունքից այդպիսի շեղումը:

Կառավարությունը պնդել է, որ Վճռաբեկ դատարանը, Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի՝ դիմումատուի գործի նկատմամբ ոչ կիրառելի լինելու վերաբերյալ եզրահանգման գալով, պատշաճ կերպով հիմնավորել է «այլ իրավական նորմեր», այդ թվում՝ Հողային օրենսգրքով սահմանված նորմերը կիրառելու իր ընտրությունը (տե՛ս վերեւում՝ 30-րդ պարբերությունը): Սակայն Դատարանը նկատում է, որ այս փաստարկը որեւէ կերպ չի հիմնավորվում վիճարկվող որոշման տեքստում: Ավելին, Կառավարությունն ինքը չի նշել, թե որ «այլ իրավական նորմերն» է Վճռաբեկ դատարանը կիրառելի համարել դիմումատուի գործի համար, այլ պարզապես նշել է, որ այդ նորմերը «այն նորմերը չեն, որոնք վկայակոչվել են Վարչական դատարանի եւ դիմումատուի կողմից» (նույն տեղում):

37. Դատարանը նկատում է, որ նախքան դիմումատուի գործը քննելը Վճռաբեկ դատարանը քննել էր մի շարք գործեր, որոնք վերաբերում էին ինչպես պետության եւ համայնքների, այնպես էլ այլ անձանց սեփականություն հանդիսացող գույքը ձեռքբերման վաղեմության ուժով ձեռք բերելու նախապատվության իրավունքին (տե՛ս վերեւում՝ 24-րդ, 25-րդ եւ 26-րդ պարբերությունները): Դատարանն այնուհետեւ նկատում է, որ Վճռաբեկ

դատարանը 2010 թվականի ապրիլի 2-ի որոշման մեջ վկայակոչել է իր 2007 թվականի մարտի 27-ի թիվ 3-153 (ՎԴ) որոշումը, որը, անուամենայնիվ, վերաբերում էր գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռքբերման վաղեմության ուժով մի մասնավոր կողմից մյուսին փոխանցելու հարցին այն հանգամանքներում, երբ, ինչպես նշվել է վերեւում, դատարանն արդեն եզրակացրել էր, որ Քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը կիրառելի չէր դիմումատուի գործի նկատմամբ:

Կառավարությունը նշել է, որ Վճռաբեկ դատարանը համարել է, որ դիմումատուի գործի համար ավելի շուտ կիրառելի է իր թիվ 3-153 (ՎԴ) որոշումը, քան իր 2007 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 3-1835 (Ա) եւ 2007 թվականի մարտի 30-ի թիվ 3-537 (ՎԴ) որոշումները, ելնելով փաստական հանգամանքների տարբերություններից (տե՛ս վերեւում՝ 30-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, պատճառաբանության բացակայության պարագայում ամենեւին էլ պարզ չէ, որ Վճռաբեկ դատարանը գտել է, որ իր թիվ 3-153 (ՎԴ) որոշումը կիրառվող նախադեպային իրավունքն էր: Ընդհակառակը, ինչպես պարզ է դառնում որոշման համապատասխան մասից, Վճռաբեկ դատարանը վկայակոչել է իր թիվ 3-153 (ՎԴ) որոշումը՝ ավելի շուտ հիմնավորելու իր այն եզրահանգումն առ այն, որ 187-րդ հոդվածը կիրառելի չէր դիմումատուի գործի համար, քան նշելու այդ որոշումը որպես կիրառելի նախադեպային իրավունք՝ ելնելով դրա փաստական հանգամանքներից (տե՛ս վերեւում՝ 15-րդ պարբերությունը): Ավելին, Վճռաբեկ դատարանի վիճարկվող որոշումը չի պարունակում որեւէ հղում իր թիվ 3-1835 (Ա) եւ թիվ 3-537 (ՎԴ) որոշումներին՝ չհաշված, որ առկա չէ այդ որոշումներում ներկայացված եզրահանգումների լույսի ներքո որեւէ վերլուծություն՝ դիմումատուի գործի փաստացի հանգամանքների վերաբերյալ՝ չնայած, որ դիմումատուի գործը մասնավորապես վերաբերում էր պետության սեփականություն հանդիսացող հողերին: Հետեւաբար Դատարանը դժվարանում է ընդունել Կառավարության կողմից բարձրացված այս փաստարկը:

38. Դատարանը նշում է, որ Վճռաբեկ դատարանն իր 2007 թվականի մարտի 30-ի թիվ 3-537 (ՎԴ) որոշման մեջ եկել էր ձեռքբերման վաղեմության ուժով գույք

ձեռք բերելու նախապատվության իրավունքի ծագման հարցը որոշելու սկզբունքի վերաբերյալ եզրահանգման: Վճռաբեկ դատարանը մասնավորապես արձանագրել էր, որ այն փաստը, որ անձը տասը տարի անընդմեջ, բացահայտ եւ բարեխղճորեն տիրապետում է գույքը, գերակայում է այդ գույքի նկատմամբ մեկ այլ անձի սեփականության իրավունքի առկայությունը հաստատող ապացույցների նկատմամբ (տե՛ս վերեւում՝ 25-րդ պարբերությունը):

Դիմումատուի գործով, այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը որդեգրել է հակառակ մոտեցումը՝ նախապատվություն տալով այն փաստին, որ հողը պետական սեփականություն էր, քանի որ այն գտնվում էր համայնքի վարչական սահմաններից դուրս, մինչդեռ դիմումատուն վարձավճար էր վճարել համայնքի բյուջե: Դրանով իսկ Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել ստորին ատյանի դատարանի կողմից ուսումնասիրված բոլոր ապացույցներին (տե՛ս վերեւում՝ 13-րդ պարբերությունը) եւ Ա.Հ.-ի կողմից բերված վճռաբեկ բողոքին դիմումատուի կողմից տրված պատասխանում վերջինիս բարձրացրած փաստարկներին (տե՛ս վերեւում՝ 14-րդ պարբերությունը) առ այն, որ նա ավելի քան տասը տարի անընդմեջ, բացահայտ եւ բարեխղճորեն տիրապետել է տվյալ հողակտորը. հարցեր, որոնք կարեւոր էին որոշելու համար, թե արդյոք դիմումատուն կարող էր հավակնել, համաձայն ներպետական իրավունքի, նախապատվության իրավունք ստանալու: Այս հանգամանքներում Դատարանը համարում է, որ Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել դիմումատուի փաստարկներին, որոնք հատուկ էին, վերաբերելի ու կարեւոր գործի լուծման համար (տե՛ս *Պրոնինան ընդդեմ Ուկրաինայի* [*Pronina v. Ukraine*], թիվ 63566/00, § 25, 2006 թվականի հուլիսի 18):

39. Դատարանը գտնում է, որ վերը նշված վարույթում առկա բազմաթիվ թերություններ, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի կողմից կիրառելի իրավական դրույթը պատշաճ կերպով չնշելը, դիմումատուի կողմից ներկայացված կարեւոր փաստարկներին չանդրադառնալը եւ սեփական նախադեպային իրավունքը չկիրառելու մասով պատճառաբանություն չներկայացնելը բավարար են եզրակացնելու, որ դիմումատուն չի օգտվել արդար դատավարության իր իրավունքից:

40. Վերը նշված դիտարկումները Դատարանը բավարար է համարում եզրակացնելու համար, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

41. Դիմումատուն նշել է, որ ինքը ձեռքբերման վաղեմության ուժով *ex lege* (*իրավունքի համաձայն*) ձեռք է բերել վերը նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունք, մինչդեռ այն իշխանությունների կողմից օտարվել է երրորդ անձի: Նա բողոքել է, որ Վճռաբեկ դատարանի կողմից վերը նշված վարույթում իր սեփականության իրավունքը ճանաչելու պահանջը մերժելու արդյունքում խախտվել են իր գույքային իրավունքները: Նա վկայակոչել է Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

> «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:
>
> Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Ա. Ընդունելիությունը

42. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «գույք» չուներ:

43. Դիմումատուն պնդել է, որ վիճարկվող հողակտորը ձեռքբերման վաղեմության ուժով ձեռք բերելու նախապատվության իր իրավունքը բավարար կերպով հիմնավորված էր՝ համաձայն ներպետական իրավունքի:

44. Դատարանը կրկնում է, որ դիմումատուն կարող է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման մասին պնդել միայն այնքանով, որքանով վիճարկվող որոշումներն առնչվում են այդ դրույթի իմաստով իր «գույքին»: «Գույք» կարող է համարվել «գոյություն ունեցող գույքը» կամ պահանջի իրավունքները, որոնք բավարար չափով սահմանված են «ակտիվներ» համարվելու համար: Եթե գույքային շահն ունի պահանջի բնույթ, ապա այն կարող է համարվել «ակտիվ» միայն այն դեպքում, երբ այդ շահը բավարար չափով հիմնավորված է ազգային իրավունքով (օրինակ, երբ առկա է ներպետական դատարանների կողմից սահմանված նախադեպային իրավունք, որը դա հաստատում է), այսինքն՝ երբ պահանջի իրավունքը բավարար չափով սահմանված է կիրառելի լինելու համար: Դատարանն անդրադարձել է նաեւ այն պահանջներին, որոնց առնչությամբ դիմումատուն կարող է պնդել, որ ինքն ունի առնվազն «իրավաչափ ակնկալիք», որ դրանք կիրականացվեն, այսինքն՝ ինքն արդյունավետորեն կօգտվի իր գույքային իրավունքից: Այնուամենայնիվ, իրավաչափ ակնկալիքն անկախ գոյություն չունի. այն պետք է բխի գույքային շահից, որը, ազգային իրավունքի համաձայն, ունի բավարար իրավական հիմքեր (տե՛ս *Ռադոմիլջան եւ այլք ընդդեմ Խորվաթիայի* [ՄՊ] [*Radomilja and Others v. Croatia* [GC]], թիվ 37685/10 եւ թիվ 22768/12, §§ 142-143, 2018 թվականի մարտի 20 եւ դրանում հիշատակված նախադեպային իրավունքը):

45. Դատարանը նշում է, որ Հայաստանի իրավունքի համաձայն՝ անձը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ձեռքբերման վաղեմության ուժով ձեռք բերելու նախապատվության իրավունք ձեռք է բերում, երբ պահպանվում են բոլոր օրենսդրական պայմանները, այն դեպքում, երբ իշխանությունները որոշում են կայացնում հողը օտարելու մասին: Այսինքն՝ ներպետական իրավունքի համաձայն՝ այն հողամասը, որի նկատմամբ անձն ունի ձեռքբերման վաղեմության ուժով այն ձեռք բերելու նախապատվության իրավունք, ենթակա է այդ անձին ուղղակի վաճառքի (տե՛ս վերեւում՝ 20-րդ, 22-րդ եւ 25-րդ

պարբերությունները):

46. Տվյալ դեպքում իշխանությունները, որոշում կայացնելով այն հողամասը օտարելու մասին, որի առնչությամբ դիմումատուն պնդում է, որ ունեցել է ձեռքբերման վաղեմության ուժով ձեռք բերելու նախապատվության իրավունք, վիճարկվող հողամասը հրապարակային աճուրդով վաճառել են երրորդ անձի: Այս հանգամանքներում այն հարցը, թե արդյոք դիմումատուն բավարարել է օրենսդրական պայմանները՝ ձեռքբերման վաղեմության ուժով նախապատվության իրավունք ձեռք բերելու համար, պետք է որոշվեր իրավասու դատարաններում իրականացված վարույթներում, որոնց ընթացքում դիմումատուն վիճարկել էր իշխանությունների՝ գույքը հրապարակային աճուրդով օտարելու մասին որոշումը: Հետեւաբար Դատարանը համարում է, որ դիմումատուի կողմից վկայակոչված գույքային շահն ունի պահանջի բնույթ եւ չի կարող բնութագրվել որպես Դատարանի նախադեպային իրավունքի իմաստով «գոյություն ունեցող գույք» (տե՛ս *Տրգոն ընդդեմ Խորվաթիայի* [*Trgo v. Croatia*], թիվ 35298/04, § 35, 2009 թվականի հունիսի 11):

47. Վարչական դատարանի եզրահանգումներից պարզ է դառնում (տե՛ս վերեւում՝ 13-րդ պարբերությունը), որ հաստատվել է, որ դիմումատուն առնվազն 1995 թվականից, այսինքն՝ ավելի քան քսան տարի, անընդմեջ ու բարեխղճորեն տիրապետել է տվյալ հողակտորը եւ հետեւաբար բավարարել Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված օրենսդրական պայմանները: Ինչպես Դատարանը եզրակացրել է վերեւում, Վճռաբեկ դատարանը չի իրականացրել այն փաստերի եւ ապացույցների պատշաճ ուսումնասիրություն, որոնք Վարչական դատարանը գնահատել է վերը նշված եզրահանգումներն անելիս (տե՛ս վերեւում՝ 38-րդ եւ 39-րդ պարբերությունները): Դատարանը, հետեւաբար, համարում է, որ դիմումատուի պահանջը որպես Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված «ակտիվ» որակվելու համար ազգային իրավունքով բավարար չափով սահմանված է:

48. Վերը նշվածից հետեւում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ոչ

կիրառելի լինելու վերաբերյալ Կառավարության առարկությունը պետք է մերժվի:

49. Դատարանը նշում է, որ սույն բողոքը ո՛չ ակնհայտ անհիմն է, ո՛չ էլ անընդունելի Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

50. Դիմումատուն նշել է, որ ինքն ավելի քան քսաներեք տարի անընդմեջ տիրապետել է տվյալ հողամասը: Նա բարելավումներ է կատարել՝ ցանկապատ տեղադրել, մաքրել տարածքը, պարտեզի սարայիկ կառուցել եւ մշակել հողը: Իշխանությունները երբեք որեւէ միջոց չեն ձեռնարկել այն հետ վերցնելու համար կամ իրեն չեն տեղեկացրել, որ ինքն ապօրինի է տվյալ հողը տիրապետում: Ընդհակառակը, իշխանությունները տարիներ շարունակ վարձավճարներ են հավաքել հողի վարձակալության դիմաց՝ իր եւ Թեղուտի համայնքապետարանի միջեւ կնքված համապատասխան պայմանագրերի հիման վրա, որոնք իշխանությունները երբեք չեն փորձել անվավեր ճանաչել: Այդ հանգամանքներում ինքը կունենար տվյալ հողակտորը ձեռքբերման վաղեմության ուժով ձեռք բերելու նախապատվության իրավունք, եթե իշխանությունները չորոշեին օտարել այն: Այնուամենայնիվ, իշխանությունները հրապարակային աճուրդով վաճառել են հողակտորը երրորդ անձի՝ ի հակադրություն Հողային օրենսգրքի համապատասխան դրույթների, իսկ Վճռաբեկ դատարանն իր 2010 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ հրաժարվել է ճանաչել տվյալ հողակտորը ձեռք բերելու նրա նախապատվության իրավունքը: Այդպիսով Վճռաբեկ դատարանը ցուցաբերել է խիստ ֆորմալիստական մոտեցում՝ իր եզրահանգումների համար հիմք ընդունելով այն փաստը, որ հողը պատկանում էր պետությանը, եւ դիմումատուն դրա նկատմամբ սեփականության իրավունքներ չուներ: Այնուամենայնիվ, այն

փաստը, որ այդ հողի նկատմամբ սեփականության իրավունքն ինչ-որ ժամանակ համայնքից փոխանցվել էր պետությանը, կարեւոր չէր, քանի որ ինքը շարունակել էր տիրապետել տվյալ հողակտորը եւ վարձավճար վճարել դրա համար: Մարզպետի՝ հողի համար աճուրդ անցկացնելու մասին որոշումն անօրինական էր, քանի որ այն ենթակա էր ուղղակի վաճառքի իրեն՝ համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի եւ նույն օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բացառության:

Դիմումատուն, ի վերջո, նշել է, որ ստիպված էր չափազանց մեծ անհատական բեռ կրելու, քանի որ իշխանությունները, տեղյակ լինելով այն փաստի մասին, որ ինքը տիրապետել էր տվյալ հողակտորը տարիներ շարունակ եւ այն հանգամանքներում, երբ ինքը, համաձայն ներպետական իրավունքի, ուներ այդ հողը ձեռք բերելու նախապատվության իրավունք, աճուրդի մասին ծանուցում էին տպագրել «*Հայաստանի Հանրապետություն*» թերթի 2007 թվականի փետրվարի 21-ի համարում. թերթ, որը նույնիսկ չէր առաքվում մինչեւ իր գյուղ: Նույնիսկ եթե այն առաքված լիներ իր գյուղ, ինքը չէր կարող ակնկալել, որ կստուգեր այդ թերթի յուրաքանչյուր համարն այդ ամբողջ տարիների ընթացքում, երբ ինքն օգտագործել էր խնդրո առարկա հողակտորը՝ պարզելու համար, թե արդյոք իշխանությունները հավանաբար որոշած կլինեին այն վաճառքի հանել:

51. Կառավարությունը պնդել է, հղում կատարելով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի ապրիլի 2-ի որոշմանը, որ դիմումատուն չի ունեցել խնդրո առարկա հողը ձեռքբերման վաղեմության ուժով ձեռք բերելու նախապատվության իրավունք: Հետեւաբար չի եղել որեւէ միջամտություն դիմումատուի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքին: Դիմումատուն պարզապես այդ հողամասի վարձակալ է եղել, որը չէր օգտվում ո՛չ դրա նկատմամբ սեփականության իրավունքից, ո՛չ էլ այն ձեռք բերելու նախապատվության իրավունքից: Ամեն դեպքում, նա կարող էր մասնակցել Մարզպետի կողմից կազմակերպված համապատասխան հրապարակային աճուրդին եւ ձեռք բերել այդ հողամասը, ինչը չի արել:

2. *Դատարանի գնահատականը*

52. Հաշվի առնելով վերոնշյալ այն եզրահանգումը, որ դիմումատուի պահանջը որպես «ակտիվ» որակվելու համար բավարար չափով սահմանված էր՝ պաշտպանված լինելով Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով, Դատարանը համարում է, որ հրապարակային աճուրդով խնդրո առարկա հողն օտարելը եւ Վճռաբեկ դատարանի կողմից դիմումատուի՝ տվյալ հողը ձեռքբերման վաղեմության ուժով ձեռք բերելու նախապատվության իրավունքի առկայության ճանաչումը մերժելը, անկասկած, նրա գույքային իրավունքներին միջամտություն են: Դատարանը, հետեւաբար, պետք է որոշի, թե արդյոք միջամտությունը հիմնավորված է, այսինքն՝ արդյոք այն օրինական է, հետապնդել է նպատակ, որը հանրային (ընդհանուր) շահերից է բխում, եւ արդյո՞ք այն համաչափ է այդ նպատակին:

53. Դատարանը նկատում է, որ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասով հստակ արգելվում է հրապարակային աճուրդով օտարել պետության եւ համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերն այն դեպքերում, երբ այդ հողամասերը ենթակա են ուղղակի վաճառքի: Միեւնույն ժամանակ, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսվում է, որ պետության եւ համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է այն անձանց, որոնք այդ հողամասերի նկատմամբ ունեն ձեռքբերման նախապատվության իրավունք: Պայմանները, որոնք պետք է բավարարել պետության եւ համայնքների սեփականություն հանդիսացող հողերը ձեռքբերման վաղեմության ուժով ձեռք բերելու նախապատվության իրավունքի վերաբերյալ պահանջ ներկայացնելու համար, սահմանված են նույն օրենսգրքի 72-րդ հոդվածում (տե՛ս վերեւում՝ 20-րդ, 21-րդ եւ 22-րդ պարբերությունները):

54. Ինչպես նշվել է վերեւում, Վարչական դատարանն իր 2009 թվականի հուլիսի 8-ի վճռով (տե՛ս վերեւում՝ 13-րդ պարբերությունը) հաստատել է, որ Մարզպետի՝ խնդրո առարկա հողակտորը հրապարակային աճուրդով երրորդ կողմի օտարելու մասին որոշումն անօրինական է եղել՝ հաշվի առնելով այն

հանգամանքը, որ դիմումատուն ունեցել է այդ հողը ձեռքբերման վաղեմության ուժով ձեռք բերելու նախապատվության իրավունք, քանի որ նա բավարարել է Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված օրենսդրական պայմանները, ինչպես Վճռաբեկ դատարանի կողմից մեկնաբանվել է իր 2007 թվականի մարտի 30-ի թիվ 3-537 որոշման մեջ (տե՛ս վերեւում՝ 22-րդ եւ 25-րդ պարբերությունները): Վարչական դատարանի այս եզրահանգումը հիմնված է եղել ապացույցների, այդ թվում՝ փաստաթղթային ապացույցների եւ վկաների ցուցմունքների վրա առ այն, որ դիմումատուն ավելի քան քսան տարի բացահայտ, անընդմեջ եւ բարեխղճորեն տիրապետել է այդ հողակտորը:

55. Ինչպես վերեւում նշվել է, Դատարանը գտել է, որ Վճռաբեկ դատարանը, իր 2010 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ բեկանելով Վարչական դատարանի եզրահանգումները, ոչ միայն չի նշել կիրառելի իրավունքը, այլ նաեւ շեղվել է ձեռքբերման վաղեմության իրավունքի վերաբերյալ իր սեփական նախադեպային իրավունքից: Ավելին, Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել Վարչական դատարանի փաստացի եզրահանգումներին՝ վերագնահատելով նախորդ վարույթներում ուսումնասիրված ապացույցները, եւ բոլորովին չի անդրադարձել Մարզպետի՝ խնդրո առարկա հողը հրապարակային աճուրդով օտարելու մասին որոշման օրինականության հարցին:

Դիմումատուի՝ խնդրո առարկա հողակտորը ձեռքբերման վաղեմության ուժով ձեռք բերելու նախապատվության իրավունքի ճանաչումը մերժելու առնչությամբ Վճռաբեկ դատարանի կողմից ներկայացված միակ փաստարկն այն էր, որ նա վարձավճար էր վճարել համայնքի բյուջե, մինչդեռ հողակտորը գտնվում էր համայնքի վարչական սահմաններից դուրս եւ հետեւաբար պետական սեփականություն էր (տե՛ս վերեւում՝ 15-րդ, 36-րդ, 36-րդ եւ 38-րդ պարբերությունները): Այնուամենայնիվ, պարզ չէ, թե ինչ հիմնավորմամբ է այդ փաստարկը վերաբերելի վեճի լուծման համար այն հանգամանքներում, երբ ո՛չ Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածով, ո՛չ էլ Վճռաբեկ դատարանի համապատասխան նախադեպային իրավունքով որեւէ տարբերակում չի արվել այն մասով, թե արդյոք հողամասը պետական, թե համայնքային սեփականություն է,

այնքանով, որքանով դա վերաբերում է կիրառվող իրավական ռեժիմին (տե՛ս վերեւում՝ 35-րդ պարբերությունը):

56. Դատարանը կրկնում է, որ այն զգայուն է իր դերի լրացուցիչ բնույթի առումով, եւ ներպետական իրավունքի հետ համապատասխանությունը վերանայելու իր լիազորությունը սահմանափակ է: Այնուամենայնիվ, հաշվի առնելով իր կողմից ավելի վաղ արված եզրահանգումն առ այն, որ Վճռաբեկ դատարանը չի պատճառաբանել Վարչական դատարանի եզրահանգումները բեկանելու մասին որոշումը, որը նախկինում ճանաչել էր այն հողամասի օտարման անօրինականությունը, որը դիմումատուն ավելի քան քսան տարի անընդմեջ եւ բարեխղճորեն տիրապետել էր, Դատարանը համարում է, որ սույն գործով առկա են համոզիչ տարրեր, որոնք բերում են այն եզրահանգման, որ դիմումատուի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքին միջամտությունը օրինական չի եղել (տե՛ս, *a contrario* (*հակառակը*), վերեւում հիշատակված՝ Ռադոմիլջան եւ այլք [Radomilja and Others] գործը, § 150):

57. Հետեւաբար տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

58. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

> «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

59. Դիմումատուն պահանջել է 5 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Ինչ վերաբերում է նյութական վնասին, ապա դիմումատուն նշել է, որ ինքն իր վրա է վերցրել այդ հողակտորի վրա այնպիսի բարելավումներ կատարելու ծախսերը, ինչպիսիք են ցանկապատ տեղադրելը, տարածքը մաքրելը եւ այլն, սակայն չունի որեւէ անդորրագիր՝ դրանք հաստատելու համար, քանի որ գյուղական բնակավայրերում անդորրագիր ստանալն այնքան էլ ընդունված պրակտիկա չէ: Նյութական վնասը փոխհատուցելու հարցն ինքը թողել է Դատարանի հայեցողությանը:

60. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն իր կրած նյութական վնասի մասին իր պահանջը հիմնավորող որեւէ համապատասխան փաստաթուղթ չի ներկայացրել, եւ հետեւաբար նրա պահանջը պետք է մերժվի: Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, ապա Կառավարությունը համարել է, որ այս պահանջը նույնպես չի հիմնավորվել որեւէ համապատասխան փաստաթղթով: Ամեն դեպքում, ոչ նյութական վնասի դիմաց պահանջվող գումարը չափազանց մեծ է եւ պետք է մերժվի:

61. Դատարանը նկատում է, որ դիմումատուն իր կրած ենթադրյալ նյութական վնասի համար ո՛չ որեւէ կոնկրետ հոդվածով նախատեսված պահանջ է ներկայացրել, ո՛չ էլ որեւէ հիմնավորող փաստաթուղթ. այն, հետեւաբար, մերժում է այս պահանջը:

62. Դատարանը գտնում է, որ անզորության եւ անհանգստության այն զգացումները, որոնք առաջացել են դիմումատուի՝ այն հողակտորի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու անկարողությունից, որը նա այդքան երկար ժամանակ տիրապետել է, նրան պատճառել են ոչ նյութական վնաս, որը պետք է համապատասխան ձեւով փոխհատուցվի: Դատարանը, որոշում կայացնելով արդարության սկզբունքի հիման վրա, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 41-րդ հոդվածով, որոշում է բավարարել դիմումատուի՝ ոչ նյութական վնասի վերաբերյալ պահանջը եւ այս մասով նրան շնորհել

5 000 եվրո:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

63. Դիմումատուն ծախսերի եւ ծախքերի մասով որեւէ պահանջ չի ներկայացրել:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

64. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. *Հայտարարում է* գանգատն ընդունելի.

2. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում.

3. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում.

4. *Վճռում է, որ* ՝

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում նյութական վնասի դիմաց պետք է դիմումատուին վճարի 5 000 եվրո (հինգ հազար եվրո), որը պետք է փոխարկվի Հայաստանի Հանրապետության դրամով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ

տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5. Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը։

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2020 թվականի մարտի 19-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի։

Ռենատա Դեգեներ	Քրշիշթոֆ Վոյտիչեկ
Քարտուղարի տեղակալ	Նախագահ